

Ժամանակ: Տարսնի եպիսկոպոսը՝ որուն ոչ յոյն եւ ոչ հռոմայեցի լեզուի ծանօթութիւնը կը պահպէր, 1192ին իր Պատարագի մեկնութիւնը գրելու ատեն իրեն նախնիներէն աւելի բան մը անկատմամբ չէր գիտեր, երբ որ նոյն հանգամակը հոն (ինչպէս անկէ առաջ ալ իր հանգամակի գեղեցիկ Մեկնութեանը մէջ) ուրիշ բան չանուանեց՝ բայց եթէ Նիկիական հաւատ, եւ ուրիշ Հարց չընծայեց՝ բայց եթէ 318երուն՝ որոնք Նիկիա ժողովեցան Երիտմտորութեանը դէմ:

Ըս անձըութեան աղբիւրը զլիսաորաբար ան եղաւ որ արդէն 607 դարուն սկիզբները մեր առաջնիկայ հանգամակին սանկ վերնագիր գրուած էր մեր Պատարագամատուցին մէջ. ՆԻԿԻԱ-ԿԱՆ ՀԱՆԱՏ:

Հազիւ Ներսիսեանց ժամանակէն 150 տարի ետքը սոյն անուանակոչութեան սխալը զգացին (1342ին) Սոյ ժողովոյն Հապքը, եւ իմացան որ իրենց դործածած հանգամակը յայտակարէս Նիկիական չի կրնար բառիլ, անոր համար ալ՝ առաջին անգամ՝ րլալով՝ հռոմայեցի լեզուի թարգմանած Ս. Եթոսոյն խրկեցին:

Վերջապէս կը մնար Միսիթարեանց զպրոցին ուրիշ աշխատութիւն մը, ճանչնալով բոլոր աս հանգամակին մէկալ թէ՛ Նիկիական եւ թէ՛ Վ-Պոլսի հանգամակներէն ունեցած տարբերութիւնը՝ որն որ երկայն ատեն անոնց անծանօթ չէր կրնար մնալ, աս տարբերութեան պատճառն սկսան որոնել:

Հ. Փափազեան¹, Հ. Եւեռիքեան², բաղնահմուտ Հ. Եւգերեան³ եւ ուրիշ Միսիթարեանք Վ կենտից եւ անոնց ժամանակից Միսիթարեանք Վ իննականք, ինչպէս նաեւ անոնց Պերապ. Երբայն Բարիկեան⁴ եւ ուրիշ շատերը մինչեւ վերջին օրերը կենթագրեն ու կը հրատարակեն որ Ս. Պարիզոր Լուսաւորիչ՝ որն որ Նիկիոյ ժողովոյն ատեն կենդանի էր, քանի մը խօսքերով ճոխացուց անոր հանգամակը, եւ իրեն յաջորդները մինակ մինչեւ Ներսէս Ե եւ Սահակ Ե քիչ մը բան աւելցուցած պիտ'որ ըլնան: Վերջապէս նաեւ վերոյիշեալ Արեւիկոյ հայրապետութեան գաւառական Սիւնհոզոսին համար պատրաստուած նիւթոց (Schemaներուն) մէջ ալ նոր բան մը չենք գտներ⁵:

Մեր կաթողիկէ միութենէն տարանջատ եղբայրներուն գալով՝ անոնց համար խնդիրը շատ զիւրին է: Իրենց շատոնց ունա-

¹ Իրեն ընտիր գրուածքին մէջ զօրն որ «Հանգամակ Հաւատոյ» անուանած է. ապ. Վ կենտ. 1807:

² Իրեն խոսքերէն դործոյն մէջ «Վ անտարագրութեան եկեղեցական գրոց Հայոց»: P. Gabr. Dr. Avedichian: Sulle correzioni fatte ai libri ecclesiastici armeni. Venezia, 1868.

³ Ի ծանօթ. առ. Յովհ. Իմաստ. ընդ-գէմ՝ Երեւութ. եւ ի Վարս Սրբոց, Հաւ. Ե. էջ 426:

⁴ Համատ. օտ Յայտյանդ իմանութիւն երկուց ճշմարտութեանց ընդգէմ երկուց մտորութեանց: Վ իննաւ. 1817:

⁵ Վր. ԺԲ. Վ ան եկեղ. գրոց Հայ-աստանեայց եկեղեցւոյ: Թիւ 11: